ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 34-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2015թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը.
1.Գեղաշեն գուղական համայնքի ղեկավարի հանրությանը ներկայացվող հաշվետվության քննարկման մասին:
2.Գեղաշեն գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ վաճառքի ձևով օտարելու մասին:
3.Գեղաշեն համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 17-ի N55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՎԱ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԲԱՅԱՆ ՆԱՐԻԿ
4. ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա[illegible]
7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ[illegible]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 35-Ա

ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերով, համայնքի ավագանին որոշում է.

1.Ի գիտություն ընդունել համայնքի ղեկավարի հանրությանը ներկայացրած հաշվետվությունը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՎԱ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԲԱՅԱՆ ՆԱՒՐԱ
4. ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ [illegible]
7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ [illegible]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Գեղաշեն համայնքի ավագանու
2015թ. օգոստոսի N 35-Ա որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղական համայնքի ղեկավարի հաշվետու համայնքային ժողովի

2015 թվականի օգոստոսի 18-ին տեղի ունեցավ Գեղաշեն համայնքի ղեկավարի հանրությանը ներկայացվող հաշվետու ժողովը :

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ՝

1. Լյովա Աբրահամյանի
2. Արթուր Բաբայանի
3. Նաիրա Բաբայանի
4. Արամ Գրիգորյանի
5. Անդրանիկ Դավթյանի
6. Սմբատ Խաչատրյանի
7. Հակոբ Հակոբյանի
8. Ազնար Հարությունյանի
9. Հայկ Հովհաննիսյանի

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վ. Ադամյանը

աշխատակազմի քարտուղար՝ Լ. Հովհաննիսյանը

Գյուղապետարանի աշխատակազմից՝

առաջատար մասնագետ՝ Մ. Ծառուկյանը ,

առաջին կարգի մասնագետ՝ Ն. Խաչատրյանը, Ս. Մկրտչյանը

աշխատակիցներ Տաթև Միքայելյանը, Արմեն Դավթյանը

Մասնակցում էին համայնքի 650 բնակիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքները հանրությանը իրազեկման մասին:
2. Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ -Գեղաշեն համայնքի ղեկավար Արմեն Հովհաննիսյանին

Հաշվետու ժամանակահատվածում ղեկավարվելով << Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքներով և այլ իրավական ակտերով՝ Գեղաշեն համայնքի աշխատակազմը մի շարք աշխատանքներ է կատարել համայնքի սոցիալ -տնտեսական զարգացման ուղղությամբ:

Բարելավվել է համայնքի ավագանու գործունեությունը, ավագանու նիստերը գումարվում են ավագանու կանոնակարգին համաձայն :

Համայնքային ծառայության աշխատանքները կատարվում են պատշաճ մակարդակով, բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքացիների ընդունելությունը համայնքի ղեկավարի: Իմ ամենօրյա հսկողության տակ է համայնքի ֆինանսական գործունեությունը: 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ բյուջեն կատարվել է 56 տոկոսով, ֆինանսական պարտավորություններ համայնքը չունի:

2014թվականին կատարվել է՝

- Գեղաշեն-Զառ միջհամայնքային փողոցի ասֆալտի փոսային նորոգում -9333000դրամ
- Գյուղապետարանի շենքի վերանորոգում-8693000դրամ
-Կազմել է համայնքի գլխավոր հատակագիծը-4750000դրամ
-Կազմակերպել է համայնքի աղբահանությունը-2436531դրամ
-Բարելավվել է ազգաբնակչության դիմում սոցիալական հարցերով դրամական օգնության դիմում խնդրանքները-3040000դրամ

-Դրամական օգնություն է տրվել մահացածների ընտանիքներին և նորածին երեխա ունեցողների ընտանիքներին-3870000դրամ

Աշխատանքներ են կատարվում համայնքում գործող առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների հսկողության ուղղությամբ:

Դասակարգվել և հաշվառվել են համայնքում գործող բոլոր առևտրի օբյեկտները:
Վարվում են համայնքի զինապարտների գրանցամատյանները:

Գյուղի մշակույթի կենտրոնում գործում են մի շարք խմբակներ՝ <<Աժդահակ>> պարային համույթը, ֆուտբոլի խմբակը, դաշնամուրի և երաժշտական այլ գործիքների խմբակներ: Նշված խմբակներում ընդգրկված են շուրջ գյուղի 87 երեխաներ:
Գրադարանը տեղավորված է մշակույթի շենքում, առկա է 14500 կտոր գիրք:

Ըստ հողային հաշվեկշռի համայնքում առկա է 1598.23 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք, արոտ՝ 4289.57 հա այլ հողեր՝912.26 հա:

Համայնքի աշխատակազմի կողմից ապահովվել է համայնքի բյուջեի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակայնությունը:
Բավարար է կազմակերպվում համայնքի քաղաքաշինության աշխատանքները:
Անելիքներ կան խմելու ջրի մատակարարման ուղղությամբ, հատկապես ամռան ընթացքում դժգոհություններ կան խմելու ջրի մատակարարման հարցում, որտեղ կատարվելիք աշխատանքները շատ են և նշված հարցը մնում է համայնքի առաջին հիմնախնդիրներից մեկը:

Անելիքներ կան նաև գյուղի փողոցների լուսավորության աշխատանքներում:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ.

1. Նորիկ Աբրահամյանը համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատեց դրական և իր դժգոհությունն արտահայտեց համայնքի երկրորդական փողոցները չունեն գիշերային լուսավորություն:

2. Էդվարդ Հովհաննիսյանը նույնպես համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատեց դրական և դժգոհեց, որ համայնքում չի գործում մանկապարտեզ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Համայնքի բնակիչներ՝ Օ. Խաչատրյանը, Ն. Կարապետյանը և Գ. Մկրտչյանն առաջարկեցին համայնքի ղեկավարին՝ բարելավել աշխատանքներն համայնքի խմելու ջրի մատակարարման ուղղությամբ, մնացած փողոցների լուսավորության ու ասֆալտապատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1.Համայնքի ղեկավարի հաշվետվությունն ընդունել ի գիտություն,

2.Համայնքի ղեկավարին՝

1/ Փողոցների լուսավորության հարցը:

2/ Լուծել համայնքի խմելու ջրի ցանցի վերանորոգման և վերակառուցման հարցը:

3/ Ակտիվացնել հսկողությունը գյուղում իրականացվող ապօրինի շինարարություն կատարողների նկատմամբ:

2.Ընթացիկ կամ այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ

Համայնքի ղեկավար Ա. Հովհաննիսյանի հաղորդումները համայնքի աշխատակազմի ընթացիկ աշխատանքների մասին:

Նա նշեց, որ բավարար հիմքերի վրա է գտնվում համայնքի աշխատանքային ներքին կարգապահական կանոնները, ինչպես նաև համայնքային ծառայության աշխատանքները:

Աշխատակազմի ամենօրյա ուշադրության կենտրոնում է բյուջեի հավաքագրման աշխատանքները, քաղաքացիների ընդունելությունների և համայնքի գործավարության կազմակերպումը, ինչպես նաև համայնքի շրջակա միջավայրի սանիտարական մաքրման և պահպանման աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ

Համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդումները ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 36-Ա

ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, թույլատրել օտարելու (աճուրդ վաճառքի եղանակով) համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասը.

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, թույլատրել օտարելու (աճուրդ վաճառքի եղանակով) համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասը
1)լոտ 1-ծածկագիր (07-023-0075-0024)-0.0137 հա հողամասը, որի համար մեկնարկային գին սահմանել -110970(մեկ հարյուր տասը հազար ինը հարյուր յոթանասուն) հհ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՎԱ
2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԲԱՅԱՆ ՆԱՒՐԱ
4. ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՇՈՏ
7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 37-Ն

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է.

1.Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 55-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ հատվածի

<<ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ>>

2400 տողի <<Տնտեսական հարաբերություններ>> բաժնի <<Ընդամենը>> 6-րդ սյունակի <<14718.0>> թիվը փոխարինել <<15508.0>> թվով, և <<Ֆոնդային բյուջե>> 8-րդ սյունակի <<9630.0>> թիվը փոխարինել <<10420.0>> թվով, իսկ 2451 տողի <<Ճանապարհային տրանսպորտ>> բաժնի <<Ընդամենը>> 6-րդ սյունակի <<11718>> թիվը փոխարինել <<12508.0>> թվով, և <<Ֆոնդային բյուջե>> 8-րդ սյունակի <<9630.0>> թիվը փոխարինել <<10420.0>> թվով, 3100 տողի <<Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր>> բաժնի <<Ընդամենը>> 6-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, և <<Վարչական բյուջե>> 7-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, 3112 տողի <<ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ>> բաժնի <<Ընդամենը>> 6-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, և <<Վարչական բյուջե>> 7-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով

2.Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 55-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ հատվածի

<<ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ>>
4770 տողի <<Պահուստային միջոցներ>> բաժնի <<Ընդամենը>> 4-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, և <<Վարչական բյուջե>> 5-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, 4771 տողի <<Պահուստային միջոցներ(վարչական բյուջե)>> բաժնի <<Ընդամենը>> 4-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, և <<Վարչական բյուջե>> 5-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, 5100 տողի <<Հիմնական միջոցներ>> բաժնի <<Ընդամենը>> 4-րդ սյունակի <<17279.0>> թիվը փոխարինել <<18069.0>> թվով, և <<Ֆոնդային բյուջե>> 6-րդ սյունակի <<17279.0>> թիվը փոխարինել <<18069.0>> թվով, 5111 տողի <<Շենքեր և շինությունների ձեռքբերում>> բաժնի <<Ընդամենը>> 4-րդ սյունակի <<17279.0>> թիվը փոխարինել <<18069.0>> թվով, և <<Ֆոնդային բյուջե>> 6-րդ սյունակի <<17279.0>> թիվը փոխարինել <<18069.0>> թվով

3. Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 55-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ հատվածի <<ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ>>
2400 տողի <<Տնտեսական հարաբերություններ>> բաժնի <<Ընդամենը>> 7-րդ սյունակի <<11718.0>> թիվը փոխարինել <<12508.0>> թվով, և <<Վարչական բյուջե>> 9-րդ սյունակի <<9630.0>> թիվը փոխարինել <<10420.0>> թվով, <<2451>> տողում <<Ճանապարհային տրնասպորտ >>, որից <<5111>> դասի <<Շենքերի և շինությունների ձեռքբերում>> բաժնի <<Ընդամենը>> 7-րդ սյունակի <<0.0>> թիվը փոխարինել <<790.0>> թվով, և <<Ֆոնդային բյուջե>> 9-րդ սյունակի <<0.0>> թիվը փոխարինել <<790.0>> թվով, 3100 տողի <<Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր>> բաժնի <<Ընդամենը>> 7-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, և <<Վարչական բյուջե>> 8-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով <<3112>> դասի <<ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ>> բաժնի <<Ընդամենը>> 7-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, և <<Վարչական բյուջե>> 8-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, որից <<4891>> դասի <<պահուստային միջոցներ (վարչական բյուջե)>> բաժնի <<Ընդամենը>> 7-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով, և <<Վարչական բյուջե>> 8-րդ սյունակի <<7681.3>> թիվը փոխարինել <<6891.3>> թվով

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼՅՈՎԱ

2. ԲԱԲԱՅԱՆ ԱՐԹՈՒՐ

3. ԲԱԲԱՅԱՆ ՆԱՀՐԱ

4. ԴԱՎԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

5. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ